ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

<17> հոկտեմբեր 2015թ. N 497-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի ԹԻՎ 247-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 15-ի N 99-Ն որոշման հավելված 2-ով հաստատված «Գնումների որակավորված մասնագետների շարունակական մասնագիտական վերապատրաստման» կարգի 9-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կանոնադրության (այսուհետ՝ կանոնադրություն) 10-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությունը, ինչպես նաև ղեկավարվելով կանոնադրության 14-րդ կետի 4-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ֆինանսների նախարարի 2015թ. ապրիլի 27-ի ««Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պատվիրատուների գնումների համակարգողների շարունակական վերապատրաստման ծրագրերն ու թեմաները հաստատելու մասին» թիվ 247-Ա հրամանի N 1 հավելվածի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված պատվիրատուների, ներառյալ քաղաքային համայնքների կառավարչական հիմնարկների, բացառությամբ գյուղական համայնքների, ինչպես նաև քաղաքային և գյուղական համայնքների հիմնարկների գնումները համակարգողների վերապատրաստման դասընթացների ուսումնական ծրագրի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված պատվիրատուների, ներառյալ քաղաքային համայնքների կառավարչական հիմնարկների, բացառությամբ գյուղական համայնքների, ինչպես նաև քաղաքային և գյուղական համայնքների հիմնարկների

գնումները համակարգողների վերապատրաստման դասընթացների ուսումնական ծրագրի թեմաների 4.3 կետերը լրացնել նոր 4-րդ ենթակետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«4) բանակցային ընթացակարգ («Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ):»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ